Հայտարարություն

Մրցույթ՝ ՀՀ Արմավիրի մարզի « Երվանդաշատի Գևորգ Այվազյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի (գ. Երվանդաշատ, Ազատության1) ՝

մաթեմատիկա (18դասաժամ), ինֆորմատիկա, թվային գրագիտություն և համակարգչային գրագիտություն (9 դասաժամ),քիմիա, կենսաբանություն(30 դասաժամ), պատմություն, հասարակական գիտություն (40 դասաժամ),ֆիզիկա(11դասաժամ), ֆիզկուլտուրա (19դասաժամ),հայոց լեզու և գրականություն(13 դասաժամ), շախմատ (3դասաժամ) առարկաների ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և վերադարձնում է բնօրինակները: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկը ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2024թվականի օգոստոսի 27 -ից մինչև սեպտեմբերի 9-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ն, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2024 թ. սեպտեմբերի 10-ին ժամը 14:00-ին՝ՀՀ Արմավիրի մարզի «Երվանդաշատի Գևորգ Այվազյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում:

Հասցեն՝ Արմավիրի մարզ, գ. Երվանդաշատ,Ազատության 1:
Տեղեկությունների համար զանգահարել 093 23 31 51 հեռախոսահամարով:

«Երվանդաշատի Գևորգ Այվազյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենություն: